



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 փետրվարի 2019 թվականի N 22 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ, ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ, ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի 2019թ. փետրվարի 15-ի N 20/211 գրությունը՝

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

#### 1. Հաստատել՝

1) ՀՀ Սյունիքի մարզում 2019թ. գարնանային հնարավոր հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովելու, դրանց հետևանքները կանխելու, նվազեցնելու, վերացնելու նպատակով մարզային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N1 հավելվածի.

2) ՀՀ Սյունիքի մարզում 2019թ. գարնանային հնարավոր հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովելու, դրանց հետևանքները կանխելու, նվազեցնելու և վերացնելու նպատակով կանխարգելիչ միջոցառումների պլանը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Հեղեղումների կանխարգելիչ միջոցառումների ցանկում ընդգրկված մարզի համայնքների ղեկավարներին առաջարկել ապահովելու պլանով նախատեսված աշխատանքների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

21.02.2019



*[Handwritten signature]*

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՊՈԼՆՈՎՈՒՄ: POGHOSYAN HUNAN 4005640117

**ԿԱԶՄ**

**ՀՀ Սյունիքի մարզում 2019թ. գարնանային հնարավոր հեղեղումներից  
բնակչության պաշտպանությունն ապահովելու նպատակով ստեղծված  
հանձնաժողովի**

- Ն. Բաբայան ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
- Ս.Ավետիսյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ,  
հանձնաժողովի նախագահի տեղակալ
- Բ.Զաքարյան ՀՀ ԱԻՆ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչության  
պետ (համաձայնությամբ)
- Մ. Պողոսյան ՀՀ ԱԻՆ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչության  
բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ
- Ռ. Ավետիսյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ
- Գ. Խաչատրյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպա-  
նության վարչության գյուղատնտեսության բաժնի պետի  
պաշտոնակատար
- Ն. Գևորգյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական  
ապահովության վարչության պետ
- Մ. Կոստանդյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման  
բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ
- Ա. Գևորգյան Սյունիքի մարզային հիդրոմետ ծառայության պետ  
(համաձայնությամբ)

21 02 2019

X *S. Babayan*

ԳՐԻԳՈՐ ԹԱՂԵՎՈՍԻԱՆ

Подписано ТADEVOSYAN GRIGOR 1909 90101

Հարգանքով՝



Գ.Թաղևոսյան

Սիսավոր քարտուղարի տեղակալ

ՊԼԱՆ

ՀՀ Սյունիքի մարզում 2019թ. գարնանային հնարակոր հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովելու, դրանց հետևանքները կանխելու, նվազեցնելու և վերացնելու նպատակով կանխարգելիչ միջոցառումների

Հ/Հ	Միջոցառումների անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Պատասխանատու
1	Գետերի ջրի մակարդակի, օրի բարձր ջեղմաստիճանի դեպքում: Օրվա ընթացքում 2 անգամ (7 <sup>00</sup> և 19 <sup>00</sup> ) տվյալների հայտնում Սյունիքի ՄՓՎ ԾԿԿ օպերատորիզ հերթապայակին:	Մարզի հիդրոօրերևութաբանական ծառայություն պետ	Հեղեղումների ժամանակաշրջանում՝ ամենօրյա	Մարզի հիդրոօրերևութաբանական ծառայություն
2	Հեղեղակտանգ վայրերում հսկողության կողմանցում և հեղեղների սպառնալիքի կամ առաջացման դեպքում Սյունիքի ՄՓՎ ԾԿԿ հաղորդում:	Տեղական հնքնակառավարման մարմիններ, կազմակերպություններ	Հեղեղումների ժամանակաշրջանում	Համայնքների, կազմակերպությունների ղեկավարներ
3	Հեղեղակտանգ գոտիներում գտնվող օբյեկտներում (ձեռնարկություններ, բննգլացակայան և սննդի կետեր, շուկաներ) և հողատարածքներում աշխատողների, երթուղիներով երթևեկողների զգուշացում, հարկ եղած դեպքում վտանգավոր գոտուց դուրս բերում:	Համայնքապետարաններ, պետակառուցչության և ոստիկանության մարմիններ	Մինչև հեղեղումների ավարտը	ՀՀ Սյունիքի մարզի տարածքում հանձնաժողով, մարզի հասարակական կարգի պահպանման ծառայության պետ
4	Հեղեղակտանգ գոտում գտնվող համայնքների, օբյեկտների և մարզպետարանի միջև անխափան կապի ապահովում	Մարզի հեռախոսակապի ապահովող կազմակերպություններ	Մինչև հեղեղումների ավարտը	Հեռախոսակապի օպերատորներ
5	Սպանդարյանի, Տոլոբի, Անգերակոթի, Շամբի և Գեղի ջրամբարների հնժներտատիկնիկական հսկողության ուժերացում և անվտանգության ապահովում	Ջրամբարները շահագործող կազմակերպությունների ղեկավարներ, համայնքապետարաններ	Մինչև հեղեղումների ավարտը	Մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ

6	Հեղեղումներից տուժած բնակչության բուժական օգնության ցուցաբերելու համար նախապատրաստական միջոցառումների իրականացում	Մարզի առողջապահական հաստատություններ	Մինչև հեղեղումների ավարտը	Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
7	Հակահեղեղային միջոցառումների կազմակերպման ընթացքում համայնքների ղեկավարներին մեթոդական և կազմակերպական աջակցության ցուցաբերում	Մարզային փրկարարական վարչություն, մարզի ՔՊ ծառայություններ	Հեղեղումների հետևանքով ստեղծված արտակարգ իրավիճակների դեպքում	Մարզային փրկարարական վարչության պետ
8	Հակահեղեղային միջոցառումների կազմակերպման ընթացքում լրատվամիջոցներով բնակչության իրազեկում	Մարզային փրկարարական վարչություն, մարզի լրատվամիջոցներ	Մինչև հեղեղումների ավարտը	Մարզային փրկարարական վարչության պետ
9.	Սեղավատարների, ոռոգման մայրուղիների մաքրում և գլխամասային կառույցների ամրացում	Համայնքների ղեկավարներ	2019թվականի մարտ-մայիս ամիսներ	Համայնքների ղեկավարներ
<b>Կանխադեմիչ ինժեներական միջոցառումների իրականացում</b>				
Հ/Հ	<b>Հեղեղվածույնց տարածքների նկարագրիչը</b>	<b>Իրականացվող միջոցառումները</b>	<b>Կատարման ժամկետը</b>	<b>Կատարման պատասխանատուները</b>
1.	Ներհամայնքային սեղավատարներ, ոռոգման մայրուղիներ և գլխամասային կառույցներ	Սեղավատարների, ոռոգման մայրուղիների մաքրում և գլխամասային կառույցների ամրացում	2019թվականի մարտ-մայիս ամիսներ	Համայնքների ղեկավարներ
2.	<b>Սիսիան համայնք</b> Շարղատ, Բալաք, Շաքի, Ույծ, Շանք բնակավայրերի առափնյա տնտեսություններ և վարելահողեր	Վերացնել բերվածքները, մաքրել գետի հունը և սեղավատարերը աղբից	2019 թվականի մարտ-մայիս ամիսներ	Սիսիան համայնքի ղեկավար
3.	<b>Սիսիան համայնք</b> Արկիս, Հացավան, Աջոտավան, Թափի, Բոնակոթ բնակավայրերի առափնյա տնտեսություններ և վարելահողեր	Վերացնել բերվածքները, մաքրել գետի հունը և սեղավատարերը աղբից	2019 թվականի մարտ-մայիս ամիսներ	Սիսիան համայնքի ղեկավար
4.	<b>Գողիս համայնք</b> Գողիս, Քարահունջ բնակավայրերի առափնյա տնտեսություններ և վարելահողեր	Վերացնել բերվածքները, մաքրել գետի հունը և սեղավատարերը աղբից, գետի ափերի ամրացում	2019 թվականի մարտ-մայիս ամիսներ	Գողիս համայնքի ղեկավար

5.	<b>Կապան համայնք</b> Նորաշենիկ, Ձորաստան, Սյունիք քնակավայրերի առափնյա տնտեսություններ և վարելահողեր	վերացնել բերվածքները, մաքրել գետի հունը և սելավատարերը աղբից	2019 թվականի մարտ-մայիս ամիսներ	Կապան համայնքի ղեկավար
6.	<b>Քաջարան համայնք</b> Լեռնաձոր և Ձագեձոր քնակավայրերի առափնյա տնտեսություններ և վարելահողեր	վերացնել բերվածքները, մաքրել գետի հունը և սելավատարերը աղբից	2019 թվականի մարտ-մայիս ամիսներ	Քաջարան համայնքի ղեկավար
7.	<b>Մեղրի համայնք</b> Լեռիվազ, Վարդանիձոր և Մեղրի քնակավայրերի առափնյա տնտեսություններ և վարելահողեր	վերացնել բերվածքները, մաքրել գետի հունը և սելավատարերը աղբից	2019 թվականի մարտ-մայիս ամիսներ	Մեղրի համայնքի ղեկավար
8.	<b>Քաջարան համայնք</b> Գեղի, Գեղավազք և Կպեճուտ քնակավայրերի առափնյա տնտեսություններ և վարելահողեր	վերացնել բերվածքները, մաքրել գետի հունը և սելավատարերը աղբից	2019 թվականի մարտ-մայիս ամիսներ	Քաջարան համայնքի ղեկավար
9.	<b>Կապան համայնք</b> Ծափի և Նեղքին Հանդի համայնքների առափնյա տնտեսություններ և վարելահողեր	վերացնել բերվածքները, մաքրել գետի հունը և սելավատարերը աղբից	2019 թվականի մարտ-մայիս ամիսներ	Կապան համայնքի ղեկավար
10.	<b>Կապան համայնք</b> Գործարանային թաղամասի առափնյա տնտեսություններ և Գեղանուշի պղտնմբար	վերացնել բերվածքները, մաքրել գետի հունը և սելավատարերը աղբից	2019 թվականի մարտ-մայիս ամիսներ	Կապան համայնքի ղեկավար
11.	<b>Մեղրի համայնք</b> Արաքս գետի ափամերձ հատվածների ամրացման աշխատանքների օժանդակում	Գետի ափամերձ հատվածի հենապատի ամրացում	2019 թվականի մարտ-հունիս ամիսներ	Մարզպետարան, Մեղրի համայնքի ղեկավար

21 02 2019

X *J. Davtyan*

ԳՐԻԳՈՐ ԹԱՐԵՎԱՅԱՆ



ՄԱՐԶԱՊԵՏԱՐԱՆ  
ԳՐԻԳՈՐ ԹԱՐԵՎԱՅԱՆ  
1909590101

Հարգանքով՝

/գլխավոր բարտուղարի տեղակալ/